Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

•Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 1(69), 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՊՈՒՌՆԵՐԻ (ODONATA, INSECTA) ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Վ. ՅՈՒ. ԱՆԱՆՅԱՆ, Ս. Խ. ՊԻՊՈՅԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
gomphus@gmx.com

Միջազգային փորձի հիման վրա առաջին անգամ մշակվել և ներկայացվում են Հայաստանում հանդիպող ճպուռների կարգին պատկանող 2 ենթակարգի, 9 ընտանիքի, 22 ցեղերի, 60 տեսակի և 11 ենթատեսակի պատկանող տաքսոնների հայերեն անվանումները: Դրանք առաջին հերթին օգտակար կլինեն սովորողների, դասախոսների և բնասերների համար, նաև կնպաստեն ինչպես այդ կենդանիների հանրաճանաչության մեծացմանը, այնպես էլ Հայաստանի ջրային էկոհամակարգերի պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների արդյունավետ կազմակերպմանը:

Ճպուռներ – Odonata – Հայաստան – հայերեն անվանումներ

На основе международного опыта впервые составлены и представлены армянские названия для всех таксонов отряда стрекоз, встречающихся в Армении: 2 подотряда, 9 семейств, 22 родов, 60 видов и 11 подвидов. Обиходные названия стрекоз окажутся полезными прежде всего для учащихся, преподавателей и любителей природы Армении, будут способствовать как популяризации этих насекомых, так и более эффективной организации природоохранных мероприятий, нацеленных на сохранение водных экосистем Армении.

Стрекозы – Odonata – Армения – армянские названия

Based on international practice, Armenian common names are composed and proposed for the first time for all the taxa of the order of Odonata occurring in Armenia including 2 suborders, 9 families, 22 genera, 60 species and 11 subspecies. Vernacular names will be useful in particular to students, teachers and amateur naturalists of Armenia, will contribute to popularization of these insects as well as to a more effective organization of conservation activities aimed at protection of freshwater ecosystems of the country.

Dragonflies – Odonata – Armenia – armenian names

Միջատաբանությանն առնչվող հրապարակումներում հազվադեպ է, որ կարելի է հանդիպել անողնաշարավորների որևէ լեզվով տեղայնացված գործածական անվանումների: Նման իրավիճակը մեծամասամբ բացատրվում է կամ նման անվանումների իսպառ բացակայությամբ, կամ էլ գիտական անվանումները դրանցով փոխարինելու ոչ նպատակահարմարությամբ: Չնայած դրան, 20-րդ դարի երկրորդ կեսին և հատկապես վերջին տասնամյակների ընթացքում որոշ երկրներում լայն տարածում են գտել միջատների ու այլ անողնաշարավորների տեղեկատու-որոշիչներ՝ նախատեսված բնասերների լայն շրջանակների համար [15, 17, 18, 20, 22]: Դրանցում կենդանիների գիտական անվանումների հետ միասին ներմուծվել և օգտագործվել են գործածական անվանումներ տարբեր լեզուներով, որոնք հաճախ ավելի հեշտությամբ են հիշվում և օգտագործվում սո-

վորողների, ուսուցիչների ու բնասերների կողմից: Այսօր արդեն ընթերցողների լայն շրջանակի համար նախատեսված դաշտային որոշիչներում թիթեռների, բզեզների, ճպուռների, սարդակերպերի տեղայնացված գործածական անվանումների օգտագործումը դարձել է համընդհանուր ընդունված ձևաչափ: Այսպիսի մոտեցումը կարևոր է էկոլոգիական դաստիարակության և բնապահպանության տեսանկյունից, քանի որ տեղայնացված, տվյալ երկրի լեզվով հնչող գործածական անվանումները, լինելով ավելի հասկանալի՝ հանրության լայն շրջանակներում, նպաստում են միջատների տարբեր խմբերին պատկանող առավել տարածված ու աչքի ընկնող տեսակների հանրաճանաչության մեծացմանը:

Ընդհանրապես, միջատների աչքի ընկնող ներկայացուցիչները սովորաբար ունենում են իրենց տեղական գործածական ընդհանրական անվանումները: Մասնավորապես, հայերենում միջատների առանձին կարգերի ներկայացուցիչներ ունեն ընդհանրական անվանումներ, ինչպես օրինակ՝ «բզեզ», «թիթեռ», «ճպուռ» և այլն: Ինչ վերաբերում է ճպուռներին, ապա հայերենի տարբեր բառարաններում «ճպուռ» բառով տարբեր հեղինակներ անվանում են ոչ միայն ճպուռներին, այլև միջատների այլ կարգերի ներկայացուցիչներին՝ ցիկադներին, ծղրիդներին, ճռիկներին [1, 6, 7, 8]: Առանձին դեպքերում ճպուռներին որպես միջատների առանձին խումբ հեղինակներից ոմանք անվանում են նաև «շերեփակոթ» կամ «շերեփագի» [3]: Բացի այդ, Ղարիբյանը [4] և Ղազարեանը [5] «ճպուռ» բառն օգտագործում են բոլոր ճպուռների համար ընդհանրապես, թեև առաջին հեղինակը *Aeshna* ցեղին պատկանող ճպուռների տեսակներին առանձնացնում է «շերեփագի» բառով, ինչը ռուսերեն «стрекоза-коромысло» անվանման հայերեն թարգմանությունն է:

Հայաստանի ճպուռներին նվիրված հիմնական գիտական հրապարակումների հայերեն լեզվով ամփոփագրերում հիշատակվում է միայն «ճպուռ» բառը, ինչը զուգորդվում է առանձին տեսակների լատիներեն (գիտական) անվանումների հետ [9, 10, 11]: Հետագայում, որոշ ճպուռների հայերեն գործածական անվանումների առաջին մասնա-գիտական փորձը կատարվել է «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքի» վերջին հրատակարության մեջ [2], որտեղ տրված են ճպուռների 6 ընտանիքի պատկանող 17 տեսակի հայերեն անվանումները:

Նյութ և մեթոդ: Ելնելով վերոգրյալից, սույն աշխատանքում մենք փորձել ենք ստեղծել և համակարգված կերպով ներկայացնել Հայաստանում հայտնի բոլոր ճպուռների տաքսոնների կարճ, նկարագրողական, հիշելու համար հարմար ու բարեհունչ հայերեն անվանումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայերենի լեզվակառուցողական առանձնահատկություններին: Ըստ հնարավորի փորձել ենք խուսափել «ճպուռ» բառի անհարկի օգտագործումից: Այդ ընթացքում մենք առաջնորդվել ենք Պավլյուկի և Խարիտոնովի աշխատանքով [13], որտեղ հեղինակները ներկայացրել են. ԽՍՀՄ-ի ճպուռների ռուսական անվանումները՝ հենվելով այդ միջատների լատիներեն և հունարեն գիտական անվանումների թարգմանությունների ու դրանց վերլուծական մեկնաբանությունների վրա: Միաժամանակ, հաշվի ենք առել նաև ճպուռների այլ լեզուներով գոյություն ունեցող անվանումները [15, 18], որոնք հաճախ հիմնված են տվյալ տաքսոնի ձևաբանական կամ էկոլոգիական առանձնահատկությունների վրա: Որոշ դեպքերում, հետևելով Պավլյուկին և Խարիտոնովին [12, 13], երբ միանշանակ թարգմանությունը կամ տաքսոնի անվանման հետ կապված ծագումնաբանական խնդիրները դժվարություններ են ներկայացրել, մենք այդ անվանումը բերել ենք ուղղակի հայերեն տառադարձությամբ: Աստղանշանով (*) նշված անվանումները մենք թողել ենք առանց փոփոխությունների այնպես, ինչպես դրանք բերված են «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում» [2]:

Հարկ է նշել, որ Հայաստանում հանդիպող ճպուռների կարգաբանությունը դեռևս ճշգրտման կարիք ունի: Մասնավորապես դա առնչվում է առանձին ենթատեսակների, որոնց ինքնուրույնությունը ներկայում ավելի հաճախ է կասկածներ հարուցում: Այդ իսկ պատճառով մենք մեր ցուցակը կազմելու համար հիմք ենք վերցրել Բուդոյի և Կալկմանի [16] կողմից օգտագործված դասակարգումը՝ որոշ փոփոխություններով: Մասնավորապես, մենք ներկայացրել ենք *Calopteryx splendens* տեսակային համալիրի ենթատեսակների հայերեն անվանումները, որոնք հեղինակների կողմից հաճախ դիտարկվում են որպես հիբրիդային պոպուլյացիաներ [16]:

Արդյունքներ և քննարկում: Ստորև ներկայացնում ենք Հայաստանի տարածքում ներկայումս հայտնի ճպուռների կարգաբանությունը և բոլոր տաքսոնների հայերեն անվանումները:

ԿԱՐԳ ODONATA FABRICIUS, 1793 – ՃՊՈՒՌՆԵՐ կամ ՃՊՈՒՌԱԿԵՐՊԵՐ
ԵՆԹԱԿԱՐԳ ZYGOPTERA SELYS, 1840 – ՀԱՎԱՍԱՐԱԹԵՎԱՎՈՐ ՃՊՈՒՌՆԵՐ
ԸՆՏԱՆԻՔ LESTIDAE BIANCHI, 1905 – ԲԱՑԹԵՎԻԿԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Lestes* Leach, 1815 – Բացթևիկներ

***Lestes barbarus* (Fabricius, 1798) –** Տարաշխարհիկ բացթևիկ
***Lestes dryas* Kirby, 1890 –** Բացթևիկ-դրիադ
***Lestes macrostigma* (Eversmann, 1836) –** Մեծ բացթևիկ
***Lestes sponsa* (Hansemann, 1823) –** Սովորական բացթևիկ
***Lestes virens* (Charpentier, 1825) –** Կանաչ բացթևիկ

Ցեղ *Sympecma* Burmeister, 1839 – Սիմպեքմաներ

Sympecma fusca (Vander Linden, 1820) – Գունատ սիմպեքմա
Sympecma paedisca (Brauer, 1877) – Բրաուերի սիմպեքմա

ԸՆՏԱՆԻՔ CALOPTERYGIDAE BUCHECKER, 1876 – ԳԵՂԱԹԵՎԻԿԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Calopteryx* Leach, 1815 – Գեղաթևիկներ

Calopteryx splendens (Harris, 1782) – Փայլուն գեղաթևիկ
Calopteryx splendens erevanense Akramowski, 1948 – Երևանյան գեղաթևիկ
Calopteryx splendens tshaldirica (Bartenef& Popova, 1928) – Չլդրյան գեղաթևիկ
Calopteryx splendens cartvelica (Bartenef, 1930) – Վրացական գեղաթևիկ
Calopteryx splendens intermedia Selys, 1887 – Միջին գեղաթևիկ

ԸՆՏԱՆԻՔ EUPHAEIDAE JACOBSON ET BIANCHI, 1905– ԷՈՒՖԵՅԻԴԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Epallage* Charpentier, 1840 – Շփոթուկներ

Epallage fatime (Charpentier, 1840) – Ֆաթիմայի շփոթուկ

ԸՆՏԱՆԻՔ PLATYCNEMIDIDAE TILLYARD ET ERASER, 1938 – ԼԱՅՆՈՏԻԿԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Platycnemis* Burmeister, 1839 – Լայնոտիկներ

Platycnemis dealbata Selys, 1850 – Սպիտակավուն լայնոտիկ
Platycnemis pennipes (Pallas, 1771) – Կապույտ լայնոտիկ

ԸՆՏԱՆԻՔ COENAGRIONIDAE TILLYARD, 1926 – ՆԵՏԻԿԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Coenagrion* Kirby, 1890 – Նետիկներ

Coenagrion armatum (Charpentier, 1840) – Զինված նետիկ*
Coenagrion lunulatum (Charpentier, 1840) – Գարնանային նետիկ
Coenagrion vanbrinkae Lohmann, 1993 – Վանբրինքի նետիկ
Coenagrion puella (Linnaeus, 1758) – Փիրուզագույն նետիկ
Coenagrion pulchellum (Vander Linden, 1825) – Փոփոխական նետիկ
Coenagrion scitulum (Rambur, 1842) – Նրբագեղ նետիկ*

Ցեղ *Enallagma* Charpentier, 1840 – Կապտանետիկներ

Enallagma cyathigerum (Charpentier, 1840) – Գավաթակիր կապտանետիկ

Ցեղ *Erythromma* Charpentier, 1840 – Կարմրաչիկներ

Erythromma lindenii (Selys, 1840) – Լինդենի կարմրաչիկ
Erythromma viridulum (Charpentier, 1840) –Կանաչավուն կարմրաչիկ

Ցեղ *Ischnura* Charpentier, 1840 – Իշնուրաներ

Ischnura elegans (Vander Linden, 1820) – Նրբագեղ իշնուրա
Ischnura pumilio (Charpentier, 1825) – Փոքր իշնուրա

ԵՆԹԱԿԱՐԳ ANISOPTERA SELYS, 1840 –ԱՆՀԱՎԱՍԱՐԱԹԵՎ ՃՊՈՒՌՆԵՐ
ԸՆՏԱՆԻՔ AESHNIDAE RAMBUR, 1842 – ՇԵՐԵՓԱԳԻԱՅԻՆՆԵՐ
Ցեղ *Aeshna* Fabricius, 1775 – Շերեփագիներ

Aeshna affinis Vander Linden, 1820 – Կապուտաչյա շերեփագի
Aeshna cyanea (Müller, 1764) – Կապույտ շերեփագի
Aeshna isoceles (Müller, 1767) – Կանաչաչյա շերեփագի
Aeshna mixta Latreille, 1805 – Փոքր շերեփագի
Aeshna serrata Hagen, 1856 – Սղոցակիր շերեփագի

Ցեղ *Anax* Leach, 1815 – Դիտակալներ

Anax ephippiger (Burmeister, 1839) – Թամբակիր դիտակալ
Anax imperator Leach, 1815 – Դիտակալ-կայսր
Anax parthenope Selys, 1839 – Փոքր դիտակալ

Ցեղ*Caliaeshna* Selys, 1883 – Գեղանի շերեփագիներ

Caliaeshna microstigma (Schneider, 1845) – Շերեփագի–ուրվական

ԸՆՏԱՆԻՔ GOMPHIDAE RAMBUR, 1842 – ՄԵԽԱԳԻԱՅԻՆՆԵՐ

Ցեղ *Gomphus* Leach, 1815 – Մեխագիներ

Gomphus schneiderii Selys, 1850 – Շնեյդերի մեխագի
Gomphus ubadschii Schmidt, 1953 – Սիրիական մեխագի

Ցեղ *Onychogomphus* Selys, 1854 – Բիթակիրներ

Onychogomphus assimilis *(Schneider, 1845)* – Մգավուն բիթակիր
Onychogomphus flexuosus *(Schneider, 1845)* – Գալարավուն բիթակիր
Onychogomphus forcipatus (Linnaeus, 1758) – Փոքր բիթակիր
Onychogomphus forcipatus albotibialis Schmidt, 1954 – Սպիտակասրունք բիթակիր

ԸՆՏԱՆԻՔ CORDULEGASTRIDAE BANKS, 1892 – ԼԱԽՏԱԳԻԱՅԻՆՆԵՐ

Ցեղ *Cordulegaster* Leach, 1815 – Լախտագիներ

Cordulegaster insignis Schneider, 1845 – Սքանչելի լախտագի
Cordulegaster insignis nobilis Morton, 1916 – Մորթոնի լախտագի
Cordulegaster vanbrinkae Lohmann, 1993 – Վանբրինքի լախտագի

ԸՆՏԱՆԻՔ LIBELLULIDAE STEPHENS, 1836 – ԻՍԿԱԿԱՆ ՃՊՈՒՌՆԵՐ*

Ցեղ *Crocothemis* Brauer, 1868 – Քրքումաճպուռներ

Crocothemis erythraea (Brullé, 1832) – Լայնափոր քրքումաճպուռ
Crocothemis servilia (Drury, 1773) – Արևելյան քրքումաճպուռ

Ցեղ *Leucorrhinia* Brittinger, 1850 – Ճահճաճպուռներ

Leucorrhinia pectoralis (Charpentier, 1825) – Դեղնաբծավոր ճահճաճպուռ

Ցեղ *Libellula* Linnaeus, 1758 – Ճպուռներ

Libellula depressa Linnaeus, 1758 – Տափակափոր ճպուռ
Libellula pontica Selys, 1887 – Պոնտական ճպուռ
Libellula quadrimaculata Linnaeus, 1758 – Քառաբծավոր ճպուռ

Ցեղ *Orthetrum* Newman, 1883 – Թրապոչեր

Orthetrum albistylum (Selys, 1848) – Արևելյան թրապոչ
Orthetrum brunneum (Fonscolombe, 1837) – Հարավային թրապոչ
Orthetrum cancellatum (Linnaeus, 1758) – Սովորական թրապոչ
Orthetrum coerulescens (Fabricius, 1798) – Կապտավուն թրապոչ
Orthetrum coerulescens anceps (Schneider, 1845) – Երկդիմի թրապոչ
Orthetrum sabina (Drury, 1773) – Նրբագեղ թրապոչ

Ցեղ*Pantala* Hagen, 1861 – Շրջմոլիկներ

Pantala flavescens (Fabricius, 1798) – Շիկակարմիր շրջմոլիկ

Ցեղ *Selysiothemis* Ris, 1897 – Սելիսիաներ

Selysiothemis nigra (Vander Linden, 1825) – Սև սելիսիա

Ցեղ *Sympetrum* Newman, 1833 – Տեգապոչեր

Sympetrum danae (Sulzer, 1776) – Դանայայի տեգապոչ
Sympetrum depressiusculum (Selys, 1841) – Բծավոր տեգապոչ
Sympetrum flaveolum (Linnaeus, 1758) – Դեղնավուն տեգապոչ
Sympetrum flaveolum austrinum Akramowski, 1948 – Ակրամովսկու տեգապոչ
Sympetrum fonscolombii (Selys, 1840) – Ֆոնսկոլոմբի տեգապոչ
Sympetrum meridionale (Selys, 1841) – Հարավային տեգապոչ
Sympetrum pedemontanum (Müller in Allioni, 1766) – Նախալեռնային տեգապոչ
Sympetrum sanguineum (Müller, 1764) – Արնագույն տեգապոչ
Sympetrum sanguineum sanguineum (Müller, 1764) – Մյուլլերի տեգապոչ
Sympetrum sanguineum armeniacum (Selys, 1884) – Հայկական տեգապոչ
Sympetrum striolatum (Charpentier, 1840) – Զոլավոր տեգապոչ
Sympetrum vulgatum (Linnaeus, 1758) – Սովորական տեգապոչ
Sympetrum vulgatum decoloratum (Selys, 1884) – Գունատ տեգապոչ

Այսպիսով, մեր ցուցակն ընդգրկում է Հայաստանում հայտնի ճպուռների կարգի 2 ենթակարգի, 9 ընտանիքի, 22 ցեղի, 60 տեսակի և 11 ենթատեսակի հայերեն անվանումները, ինչն առաջին անգամն է կիրառվում միջատների այս կարգի ներկայացուցիչների համար: Մեր կարծիքով ճպուռների առաջարկվող հայերեն գործածական անվանումներն ավելի հեշտությամբ կհիշվեն սովորողների, ուսուցիչների ու բնասերների կողմից, կնպաստեն այդ միջատների հանրաճանաչության մեծացմանը Հայաստանում և հանրապետության ջրային էկոհամակարգերի պահպանությանն ուղղված միջոցառումների առավել արդյունավետ իրականացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աղայան Բ.Է.* Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» Հրատարակչություն¦, 1642 էջ, 1976:
2. *Աղասյան Ա., Քալաշյան Մ.* (խմբ.). Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրք: Ա-նողնաշար և ողնաշարավոր, Երևան, ՀՀ բնապահպանության նախարարություն¦ 368 էջ, 2010:
3. *Գույումճեան Մ.Կ.* Ընդարձակ բառարան. Հայերէնէ Անգլիերէն, Պէյրութ, «ԱՏԼԱՍ¦ 1159 էջ, 1970:
4. *Ղարիբյան Ա.Ս.* Ռուս-հայերեն բառարան: Երևան «Հայաստան¦, 1472 էջ, 1977:
5. *Ղազարեան Ռ.Ս.* Գրաբարի բառարան: Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն¦ 1346 էջ, 2000:
6. *Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ.* Միջին հայերենի բառարան: Երևան, Երևանի Պետական Համալսարանի Հրատարակչություն¦ 841 էջ, 2009:
7. *Սուքիասյան Ա.Մ.* Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: Երևան, Երևանի Պետական Համալսարան¦ 685 էջ, 2009:
8. *Ճերէճեան Գ., Տօնիկեան Փ.Կ., Տէր-Խաչատուրեան Ա.* Հայոց լեզուի նոր բառարան: Պէյրութ, Կ.Տօնիկեան և Որդիք Հրատարակչատուն¦ 2530 էջ, 1992:
9. *Акрамовский Н.Н.* Фауна стрекоз Советской Армении. Зоологический сборник. 5, с. 117-188, 1948.
10. *Акрамовский Н.Н.* Личинка стрекозы *Onychogomphus flexuosus* (Schneider) (Insecta, Odonata, Gomphidae). Известия Академии Наук Армянской ССР, *11*, 5, с. 87-90, 1958.
11. *Акрамовский Н.Н.* Дополнение к фауне стрекоз восточного Закавказья (Insecta, Odonata). Известия Академии Наук Армянской ССР. 17 (10), с. 99-102, 1964.
12. *Белышев Б.Ф.* Определитель стрекоз Сибири по имагинальным и личиночным фазам. М., Ленинград, Изд-во АН СССР, 114 с.,1963.
13. *Павлюк, Р.С., Харитонов А.Ю.* Номенклатура стрекоз (Insecta, Odonata) СССР. Полезные и вредные насекомые Сибири. Новосибирск, Наука, с.12-42, 1982.
14. *Ananian, V.Yu.,M. Tailly.*Additions to the Dragonfly (Odonata) fauna of Armenia, with new records of rare or uncommon species. Russian Entomological Journal, *22*, 4, 249-254, 2013.
15. *Bos F., Wasscher M.* Veldgidslibellen. KNNV-uitgeverij. Utrecht, 1997.
16. *Boudot J-P., Kalkman V.J.* (eds.). *Atlas of the European dragonflies and damselflies.* KNNV Publishing. The Netherlands. p. 360, 2015.
17. *Chinery M.Insects of Britain and Western Europe.* A & C Black, p. 320, 2012.
18. *Dijkstra K.-D.B., Lewington R.* Field guide to the Dragonflies of Britain and Europe. British Wildlife Publishing, p. 320, 2006.
19. *Durand E., Rigaux J.* Further additions to the knowledge of the odonate fauna of Armenia, with first record of Pantala flavescens (Odonata: Libellulidae). Notulae odonatologicae, *8*, 6, 184-190, 2015.
20. *Falk S., Lewington R.*Field Guide to the Bees of Great Britain and Ireland.British Wildlife Publishing, p. 336, 2015.
21. *Tailly, M., Ananian V.,Dumont H.J.*Recent dragonfly observations in Armenia, with an updated checklist. Zoology in the Middle East, 31, 93–102.2004.
22. *Tolman T., Lewington R.*Collins Butterfly Guide: The Most Complete Field Guide to the Butterflies of Britain and Europe. Harper Collins. p. 400, 2009.

Ստացվել է 07.09.2016